## ՃԳ.

*Կ՝արժէ հրատարակել հետևեալ նամակը, պարզապէս տալու համար Հալէպի մէջ տեղի ունեցած կրօնական բաժանումի անդրանիկ շրջանէն գլխաւոր մէկ քանի կարգադրութիւնները։*

*Ամենապայծառ և գերյարգելի տեառն տեառն Աբրահամ Մխիթար Աստուածաբանուրեան Վարդապետին կեանք երկար*

... Թէ քաղաքիս և եղբայրութեան որպիսութիւնն հարցանիջիք, յետ բազում նեղութեան հալածանաց և տուրանաց, ձերին սուրբ աղօթիւք մօտ Գ. ամ է որ ի փոքր եկեղեցին սուրբ Աստուածածին յայտնի ուղղափառութեամբ վարիմք. սուրբ Աստուածն թարց խաչեցարիւ, Գ. անուն հերձուածոց ոչ յիշեմք. կաթողիկոսին անուան տեղ սուրբ Գրիգոր լուսաւորիչն յիշեմք. ամէն օր Ե պատարագ լինի, կիրակիք և տօն աւուրց աւելի լինի.. մեր հալապեցի Ակոբ վարդապետն եպիսկոպոս ձեռնադրեցաւ Բերիոյ և սահակ վարդապետն քիլիսու եպիսկոպոս եղև և տէր մարգարն մէրտինու եպիսկոպոս ձեռնադրեցաւ ի Հալէպ և Գերապայծառ Աբրահամ եպիսկոպոսն՝ կաթողիկոս եղև Հայոց. և քաղաքացիքըն մեր հօճէթ և արզ արարին սիսու կաթողիկոսին աւիրութեան. և ակոբ վարդապետին անուան պէրաթ և ֆէրման խընդրեցինք՝ իքրազ լինելու ի սիսու աթոռէն, և մին մարդ յղեցաք ըստանալ որ ֆրանսացոց յելչիին ձեռքն բանն լինելու, և նայ օր օրէ ձգելով պատրիարգէն կաշառ էառ և մեր յղած արզն պատրիարգին տվաւ, թէ ձեր բանն կու չինէ ձեր ուզածին պէս և նայ... ավէտիք անուան պէրաթն արաւ, մեր արզումն եկ ի հալէպ չար աբեղան պէրաթով զաբթ արաւ աստուածածին եկեղեցին. յետ Բ. ամաց մնաց ձեռքն Ի օր. Զ. քէսայ բրամ վատնեաց մինչ եմուտ եկեղեցին. յետոյ.. կրկին և մեք Ի քէսայ բրամ վատնեցաք՝ հօճէթիներու և ֆէթաներու պուրթիներու մուճալով (?) որ ունէաք առաջմանէ՝ զի աղօթիցեմք ընդ քահանայիւք մերով. որպէս կամիմք սուրբ աստուածն թարց խաչեցարի և Գ. անուն ոչ յիշել կրկին պիուրթի եղև մեզ աղօթել որպէս որ էաք, բայց չար ավետիք աբեղան միշտ հալածում յարուցանէ ի վերայ եղբարց. երբէք ոչ հանդարտի ի չարէ. գիշեր և ցերեկ ի դուռն բոնաւորաց է. երբ տեսաք թէ ոչ հանդարտի ի չարութենէ այժմ կրկին արզ արարինք նորա աւիրութեան թէ քան զսիսու կաթողիկոսն ալ առաւել չար և վնասակար է, կամիմք զակոբ վարդապետն պէրաթով ի վերայ մեր զի քաղաքացի յէ և գիտէ որպիսութիւն մեր և յղեցաք արզն մեր վէքիլ եղեալ մարդու և սպասեմք պէրաթին զալստեան...։ Ֆրանսացոց հին յէլչիյէն բազում վնաս կրեցաք արզին կողմանէ, որ պատրիարք թէսլում արաւ և զմեզ խեղճ ողորմելի արաւ և զերի պատրիարքին...։ Դարձեալ Գերյարգելի հայր իմ միշտ ցանկամք զի ի քաղաքէն մերոյ մին քանին զտանիցի ի ձեր միաբանութեան...։

Գերապայծառ և գերյարգելի հայրութեանդ
Ամենայնի խոնարհագունեղ ծառայ պատրաստական
Գէորգ Ցառաքելեան

Ցամի տեառն 1741
յամսեան օգոստոսի
ի հալէպ

## ՃԴ.

*Մեր վանական պատմութեան ու նաև ազգային գեղարուեստի կեանքին ի նպաստ հետաքրքրական ու միանգամայն զուարճալի թուղթ մ՝է հետևեալը, որուն ստորագրողն է «պատկերահան Յովհաննէս»։ Այս անձը ծանօթ է արդէն Մխիթարայ Հաստատութեանս, որոյ մէկ աղօթավայրին, այն է Ս. Բենեդիկտոսի մատրան խորանին*